# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2020 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## ՆԱԽԱԲԱՆ

2020 թվականի 3-րդ եռամսյակում ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի նախագծի, դրա վերաբերյալ շահագրգիռ կողմերի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված նկատառումների քննարկմանը և ԲՇԽ-ի կողմից զեկույցի ընդունմանը, զեկույցի ներկայացման միջոցառման կազմակերպման աշխատանքերին:

2020թ. հուլիսի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը կայացրել է որոշում՝ համաձայն որի Հայաստանի վավերացման եզրակացության արդյունքում Խորհուրդը համաձայն է, որ Հայաստանը ընդհանուր առմամբ ամենաբարձր՝ բավարարող (satisfactory) առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի իրականացման գործում: Վավերացման գնահատականով՝ 20 պահանջների գծով Հայաստանը գրանցել է բարձր՝ satisfactory գնահատական, իսկ 4-ի մասով գերազանցող՝ beyond գնահատական: 2020թ. հուլիսի 9-ի դրությամբ Հայաստանը ԱՃԹՆ-ի անդամ 53 երկրների մեջ 9-րդ երկիրն է, որին շնորհվել է բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ:

Սեպտեմբերին հրապարակվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. զեկույցը, որը հանրությանը ներկայացվել է սեպտեմբերի 14-ին կայացած Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման առցանց համաժողովին: Անկախ ադմինիստրատոր «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» (EY) ընկերությունը կազմել է ԱՃԹՆ-ի 2018թ. զեկույցի սեղմագիրը, որը ի լրումն Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի 2018թ. մակրո և միկրոտնտեսական, ընթացակարգային և ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող այլ համախմբված տվյալների՝ տրամադրում է նաև ԱՃԹՆ-ի և մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ 40 հարցուպատասխան՝ նպատակ հետապնդելով ԱՃԹՆ-ին նոր ծանոթացող ընթերցողին տալ մատչելի տեղեկատվություն նախաձեռնության վերաբերյալ:

COVID-19 համավարակով պայմանավորված իրավիճակից ելնելով՝ աշխատանքները հիմնականում իրականացվել են հեռակա, ԲՇԽ-ի անդամները շրջանառվող փաստաթղթերի վերաբերյալ իրենց դիտարկումները ներկայացրել են էլեկտրոնային կապի միջոցներով:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման աշխատանքները և համագործակցությունը OpenOwnership կազմակերպության հետ: OpenOwnership կազմակերպությունը օգոստոսին հրապարակել է

Հայաստանի Հանրապետությունում իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի վերլուծական զեկույցը[1]:

Իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրային ապահովումը մշակող VXSoft ընկերությունը ներկայացրել է աշխատանքների իրականացման մեկնարկային հաշվետվությունը, որը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից:

Սկսվել է Հայաստանի 2019թ. ազգային զեկույցի և նախնական ուսումնասիրության կազմման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացը:

Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Պետական եկամուտների կոմիտեն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը և հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտավորություն ունեցող ընդերքօգտագործողները հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակում ներկայացրել են 2019թ. ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները: Ժամկետների շեղումներ չեն արձանագրվել:

Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ գործընկեր միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված վեբինարների, քննարկումների, տեսազանգերի:

*Համաձայն Հայաստանի Հանրապետության 2019-2020թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:*

---

[1] https://www.openownership.org/uploads/armenia-scoping-report.pdf

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-ի 2020Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 1. **ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 4. **Կայքի ընթացիկ սպասարկում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ընտրված կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 5. **ԱՃԹՆ կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրությունների, իրավական ակտեր, նորություններ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | |

| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 6. **Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում**, **սոցիալական գովազդի պատրաստում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| | *Արդյունքները*՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ<br><br>*Վերջնաժամկետը*՝ Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 7. **Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով** (YouTube, Twitter, facebook **և այլ ցանցեր**) | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն<br><br>*Վերջնաժամկետը*՝ Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 8. **Իրազեկվածության բարձրացման միջոցառումների**, **շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ Հանդիպումներ (այդ թվում՝ մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խմբակցությունների հետ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 10. **ԱՃԹՆ-ի** 2-րդ **զեկույցի պաշտոնական ներկայացում** / **կոնֆերանս**, **իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ներկայացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ԱՃԹՆ-ի կոնֆերանս<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Երրորդ եռամսյակ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 11. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ վերաբերյալ տեղեկատվական/ ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության վերաբերյալ կրթական տեսանյութեր<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 12. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում** | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի վերաբերյալ մոդուլներ ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի և ակտիվիստների համար և դասընթացներ թիրախային խմբերի համար (ԲՇԽ, ՔՀԿ-ներ, տեղական խմբեր և ակտիվիստներ)<br><br>*Վերջնաժամկետը՝* 2020թ. | Ընթացիկ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում*
*Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում*

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն կնքված պայմանագրի, «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն շարունակել է խորհրդատվություն տրամադրել առցանց հաշվետվության համակարգում տվյալների մուտքագրման ժամանակ առաջացող խոչընդոտների վերաբերյալ: reports.eiti.am համակարգում հաստատվել են պետական մարմինների և ընդերքօգտագերծող ընկերությունների կողմից տրամադրված 2018թ. առցանց հաշվետվությունները, հարթակի ինքնաշխատ ձևավորվող ֆիլտրվող հաշվետվությունների և գծապատկերների էջերում հասանելի են դարձվել հաշվետվություններով ձևավորվող ոլորտի ֆինանսական տվյալները, վերացվել են ծրագրային անհամապատասխանությունները:

*Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ*

Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում համալրվել է էջերի բովանդակությունը, բաց տվյալների կանոններով հանրությանը հասանելի են դարձել և հրապարակվել են ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրավական ակտերը, փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Կայքի նոր տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն՝ օտարալեզու օգտվողների համար: ԱՃԹՆ-ի կայքում տեղադրվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ ազգային զեկույցը, զեկույցի սեղմագիրը[2], 2018 թվականի հաստատված հրապարակային

[2] https://www.eiti.am/hy/annual-reports/2018/

հաշվետվությունները և Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման առցանց համաժողովի տեսաձայնագրությունը[3]:

*Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում*

Կայքում հայերեն և անգլերեն լեզուներով հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 7 նորություն՝ ԱՃԹՆ-ի տեղական և միջազգային գործընթացների, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ:[4] «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում տպագրվել է ԱՃԹՆ-ի 2019թ. ստանդարտի հայերեն լեզվով գրքույկը:

*Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)*

Շարունակաբար թարմացվել են Facebook[5], YouTube[6] և Twitter[7] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, Հայաստանի ԱՃԹՆ-ի արդյունքների ու միջոցառումների վերաբերյալ հաղորդագրություններ են տեղադրվել ՀՀ փոխվարչապետ, Հայաստանի ԲՇԽ-ի նախագահ Տիգրան Ավինյանի սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում: Հայաստանում գործող լրատվամիջոցներին է տրամադրվել Հայաստանի վավերացման գնահատականի և Հայաստանի 2-րդ ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման առցանց համաժողովի վերաբերյալ մամլո հաղորդագրություններ, որոնց արդյունքում ապահովվել է միջոցառումների լայն լուսաբանումը:

*Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում*

COVID-19 համավարակով պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային հանդիպումներ չեն իրականացվել: Շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունն իրականացվել է հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով:

---

[3] https://www.eiti.am./hy/2-online-conference-arm
[4] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80
[5] https://www.facebook.com/EITIArmenia/
[6] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[7] https://twitter.com/EITI_Armenia

*Միջոցառում 10. ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս, իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ներկայացում*

2020թ. սեպտեմբերի 14-ին կայացավ Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման առցանց համաժողովը[8] ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) միջազգային քարտուղարության, միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Համաժողովի մասնակիցներին ողջույնի ուղերձ հղեց ՀՀ փոխվարչապետ, ԲՇԽ-ի նախագահ Տիգրան Ավինյանը՝ նշելով, որ ՀՀ կառավարությունը և ԲՇԽ-ն շարունակելու են իրենց ջանքերը՝ ձեռք բերված հաջողությունները պահպանելու և նախաձեռնության հետագա ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ: Հայաստանյան ԱՃԹՆ գործընթացների դինամիկայի, ձեռք բերված հաջողությունների և հետագա համագործակցության վերաբերյալ ելույթներ ունեցան ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տնօրեն Մարկ Ռոբինսոնը, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնօրեն Սիլվի Բոսուտրոն, ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիզերը: Այնուհետ, Անկախ ադմինիստրատորը՝ EY աուդիտորական ընկերությունը, համառոտ ներկայացրեց ԱՃԹՆ-ի 2019թ. ստանդարտի պահանջներին համապատասխան մշակված Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցը, Հայաստանի մետաղական հանքարդյունահանման ոլորտի նկարագիրը, զեկույցի արդյունքները և առաջարկությունները: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության երկրի համակարգող Օլեսիա Տոլոչկոյի կողմից ներկայացվեցին Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գնահատականը և ԱՃԹՆ-ի առաջիկա առաջնահերթությունները: Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրեց, թե քաղաքացիները ինչ տեղեկատվություն կարող են գտնել ԱՃԹՆ-ի հայաստանյան և պետական մարմինների պաշտոնական կայքերում: Համաժողովի ավարտին Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի և այլ բանախոսների մասնակցությամբ տեղի ունեցավ ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության ոլորտի վերբերյալ քննարկում, որին մասնակցեցին Համաշխարհային Բանկի հանքարդյունաբերության հարցերով գլխավոր մասնագետ Կիրստեն Հունդը, OpenOwnership իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստրի ներկայացուցիչներ Փիթեր Լոուն և Քեյդի Արմսթրոնգը, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կառավարության խմբակցությունից՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը, Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը, քաղաքացիական հասարակության խմբակցությունից՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանը:

Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման աշխատանքները մեկնարկել են 2-րդ եռամսյակում և այն նախատեսվում է պաշտոնապես ներկայացնել 4-րդ եռամսյակում կամ 2021 թվականի 1-ին եռամսյանկում:

[8] https://www.eiti.am/hy/2-online-conference-arm

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիսրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 18. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Հանրային ռեգիստր<br><br>*Վերջնաժամկետը՝* Առաջին-չորրորդ եռամսյակներ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 19. **Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Ուսուցում<br><br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 20. **Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Հայտարարագրեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | Ընկերություններ, իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 21. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, իրավական ակտերի նախագծեր<br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, Իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խումբ | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |

*Միջոցառում 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում*

Հաշվետու ժամանակահատվածում իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման աշխատանքներն իրականացնող VXSoft ընկերությունը շարունակել է ԻՍ ռեգիստրի մշակման աշխատանքները: ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության, Արդարադատության նախարարության և ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբը մի շարք աշխատանքային տեսազանգեր է անցկացրել VXSoft ընկերության հետ, որոնց ընթացքում հաստատվել են առցանց ռեգիստրի հիմնական տեխնիկական բնութագրիչները և առցանց հաշվետվությունների կառուցվածքը: VXSoft ընկերությունը ներկայացրել է մեկնարկային հաշվետվությունը: Մեկնարկային հաշվետվությունը տրամադրվել է ԲՇԽ-ի կարծիքին: Ներկայացված դիտողություններից հետո լրամշակված հաշվետվությունը օգոստոսի 26-ին ընդունվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունը OpenOwnership գլոբալ ռեգիստրի պատասխանատուների հետ: OpenOwnership կազմակերպությունը օգոստոսին հրապարակել է Հայաստանի Հանրապետությունում իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի վերլուծական զեկույցը[9], որում ներկայացվել է Հայաստանի առաջընթացը իրական սեփականատերերի բացահայտման գործում և ներկայացվել են մի շարք տեխնիկական առաջարկություններ, որոնք կօգնեն առցանց ռեգիստրի մշակման ժամանակ բաց տվյալների ստանդարտի, հավաքագրվող տվյալների ավտոմատ ստուգման և հավաստիացման մեխանիզմների կիրառմանը: Ուսումնասիրության հրապարակման անդրադարձ-հոդվածում[10] նշվում է, որ Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման առաջխաղացումն ընթանում է գովելի և արագ տեմպով, որը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- ✓ կառավարության որդեգրած հակակոռուպցիոն օրակարգով, որի ներքո առանձնակի կարևորվել է հանքարդյունաբերության ոլորտի սեփականության թափանցիկության հարցը,
- ✓ հանքարդյունաբերության ոլորտի նկատմամբ հասարակական կազմակերպությունների, այդ թվում, բնապահպանների ընդգծված ուշադրությամբ և իրականացված վերլուծական բացահայտումներով,
- ✓ ընդերքօգտագործող ընկերությունների՝ ԻՍ-ին վերաբերվող պահանջվող տեղեկատվությունը բացահայտելու պատրաստակամությամբ:

OpenOwnership իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստրի ներկայացուցիչներ Փիթեր Լոուն և Քեյդի Արմսթրոնգը Հայաստանի 2-րդ ԱՃԹՆ-ի զեկույցի ներկայացման առցանց համաժողովին ներկայացրել են իրականացվող աշխատանքները[11], կազմակերպության կողմից հրապարակված վերլուծական

[9] https://www.openownership.org/uploads/armenia-scoping-report.pdf
[10] https://www.openownership.org/blogs/armenia-breaks-new-ground-with-extractives-disclosures/?fbclid=IwAR2wMmeVWEVIBinAwsFguVq0OPTqFGWfX5NptdYX_ixBpzbvGRJZILXLhkc
[11] https://www.eiti.am/hy/2-online-conference-arm/part-12-openownership-arm/44/

ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանի առաջընթացը բաց տվյալների ստանդարտին համապատասխանող ԻՍ առցանց ռեգիստր մշակելու գործում:

*Միջոցառում 19. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում*

*Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնող ընկերությունների ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից, ըստ անհրաժեշտության, տրամադրվել է հայտարարագրերի լրացման կարգի և ներկայացման ընթացակարգի վերաբերյալ խորհրդատվություն:*

*Միջոցառում 20. Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից*

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության https://www.e-register.am/ կայքում pdf ձևաչափով բեռնվել են հանքարդյունաբերող ընկերությունների իրական սեփականատերերի և դրանց փոփոխությունների վերաբերյալ հայտարարագրերը: Հաշվետու ժամանակահատվածում 8 ընկերություններ[12] ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն են ներկայացրել իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրեր:

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 06.09.2020թ.գրությամբ տեղեկացրել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, որ սեպտեմբերի 2-ի դրությամբ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում մուտքագրված են թվով 33 իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր[13]: Հավելված 2-ում ներկայացված է իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող 11 ընկերություններին ս.թ. հոկտեմբերի 19-ին ներկայացված զգուշացումների և դրանց հիմքերի մասին տեղեկատվությունը:

*Միջոցառում 21. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում*

Հայաստանի Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ/OGP) 4-րդ գործողությունների ծրագրի հանձնառության կատարման շրջանակում ՀՀ արդարադատության նախարարությունը նախաձեռնել է

[12] Տվյալը տրամադրել է ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը
[13] Տվյալը տրամադրել է ՏԿԵՆ-ը:

Պետական ռեգիստրում իրավաբանական անձանց իրական շահառուների (սեփականատերերի) բացահայտման համակարգի բարեփոխման վերաբերյալ տեղեկանքի և օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները՝ համագործակցելով Կենտրոնական բանկի, Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ: Փաթեթը հանրային, ինչպես նաև ԲՇԽ-ի քննարկմանը կներկայացվի 4-րդ եռամսյակում:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 24.<br>**Վավերացման գործընթաց** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝<br>Վավերացում<br><br>*Վերջնաժամկետը*՝<br>Երրորդ եռամսյակ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, միջազգային վավերացնողներ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 24.2<br>**ԱՃԹՆ-ի իրականացման ամրապնդմանն ուղղված առաջարկվող գործողությունների իրականացում (համակարգված բացահայտումներ, կարողությունների հզորացում, հրապարակվող պայմանագրերի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի իրականացմանը հաշվեքննիչ պալատի ներգրավում, ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացի վերաբերյալ ԱԺ ներկայացուցիչների իրազեկում, վավերացման հաշվետվությամբ և ԱՃԹՆ-ի զեկույցով** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝<br>Համապատասխան աշխատանքային խմբի կազմավորում, քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, վավերացման հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափ, իրավական ակտերի նախագծեր<br><br>*Վերջնաժամկետը*՝<br>Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, պետական մարմիններ, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, անկախ ադմինիստրատոր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափի մշակում, պետական մարմինների կողմից սահմանված ձևաչափով տեղեկատվության ներկայացում)** | | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 25. **ԲՇԽ-ի նիստերի անցկացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ԲՇԽ-ի նիստեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ չի անցկացվել՝ պայմանավորված նաև կորոնավիրուս (COVID-19) հիվանդության կապակցությամբ Հայաստանում արտակարգ դրության ռեժիմի սահմանմամբ, որը սեպտեմբերի 11-ից փոխարինվել է կարանտինով: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 26. **ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 27. **ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ վարչապետի որոշում, ԲՇԽ<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ-ի խմբակցություններ, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 29. **ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 31. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2019**թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողական<br><br>Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է մասամբ/ ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է չորրորդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 32. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2020**թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագիր<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է մասամբ/ ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է չորրորդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 34. **Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 35. **Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>Պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման համակարգում գնումների գործընթացի ապահովում<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 37. **ՀՀ ԱՃԹՆ-ի** 2019 **տարեկան հաշվետության կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետություն<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է մասամբ/ ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է չորրորդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 38. **ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>Եռամսյակային հաշվետվություններ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 39. **Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր, միջազգային աշխատանքային | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խմբերի առցանց հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 40. **ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* Երրորդ եռամսյակ | Չի իրականացվել | | Նախատեսվում է իրականացնել 4-րդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 41. **Թարգմանչական աշխատանքներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 24. Վավերացման գործընթաց*

2020թ. հուլիսի 9-ին ԱՃԹՆ-ի միջազգային խորհուրդը կայացրել է որոշում[14]՝ համաձայն որի Հայաստանի վավերացման եզրակացության արդյունքում Խորհուրդը համաձայն է, որ Հայաստանը ընդհանուր առմամբ ամենաբարձր՝ բավարարող (satisfactory) առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի 2016 ստանդարտի իրականացման գործում: Վավերացման գնահատականով՝ 20 պահանջների գծով Հայաստանը գրանցել է բարձր՝ satisfactory գնահատական, իսկ 4-ի մասով գերազանցող՝ beyond գնահատական[15]: Հայաստանը գերազանցող առաջընթաց է արձանագրել ԱՃԹՆ-ի ստանդարտի (1.5) աշխատանքային ծրագիր, (2.1) իրավական դաշտ, (4.1) համակողմանիություն և (6.3) տնտեսության մեջ արդյունահանող ոլորտի մասնաբաժինը պահանջների կատարման համար:

Խորհուրդն իր գոհունակությունն է հայտնել ՀՀ կառավարության և ԲՇԽ-ի՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործում օրինակելի առաջընթացի և ազգային կարևորության խնդիրներ քննարկելու, ԱՃԹՆ-ի շրջանակը ընդլայնելու ուղղությամբ երկրի իրականացրած ջանքերի համար: Խորհուրդը նշել է, որ ԱՃԹՆ-ի գործընթացը հստակորեն ամրագրված է Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության

---

[14] https://eiti.org/board-decision/2020-39?fbclid=IwAR2vEl_YrpZexFLFouZSdMQklHbr6qOlMuXQK0LNKkt9l3z6hjqmgD_YmZQ

[15] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/07/16/eiti-validation-armenia-arm/88/

և բարեփոխումների օրակարգում: Ավելին, ԱՃԹՆ-ն նպաստել է երկրում երկխոսության նոր մշակույթի ձևավորմանը՝ խրախուսելով տարբեր խմբակցությունների միջև համագործակցությունը և մասնակցելով հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումներին:

Միևնույն ժամանակ, ԱՃԹՆ-ի գործունեության ընդլայնումը շարունակում է դիտարկվել որպես մարտահրավեր՝ հաշվի առնելով հանքարդյունաբերության բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցություններով պայմանավորված առկա դիմադրությունը: Ուստի, կարևոր է շահագրգիռ կողմերի շարունակական ներգրավվածությունն ու ԱՃԹՆ-ի հետևողական օգտագործումը՝ որպես Հայաստանի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող թեմաների քննարկման հարթակ:

2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանը ԱՃԹՆ-ի անդամ 54 երկրների մեջ 9-րդ երկիրն է, որին շնորհվել է բավարարող առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ:

Խորհուրդը որոշում է կայացրել, որ Հայաստանը վերավավերացվելու է երեք տարի հետո՝ 2023 թվականի հուլիսի 9-ին: ԱՃԹՆ-ի ստանդարտի (2.5) իրական սեփականատերերի բացահայտման պահանջի կատարումը վավերացվելու է 2021 թվականին:

*Միջոցառում 24.2. ԱՃԹՆ-ի իրականացման ամրապնդմանն ուղղված առաջարկվող գործողությունների իրականացում (համակարգված բացահայտումներ, կարողությունների հզորացում, հրապարակվող պայմանագրերի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի իրականացմանը հաշվեքննիչ պալատի ներգրավում, ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացի վերաբերյալ ԱԺ ներկայացուցիչների իրազեկում, վավերացման հաշվետվությամբ և ԱՃԹՆ-ի զեկույցով ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափի մշակում, պետական մարմինների կողմից սահմանված ձևաչափով տեղեկատվության ներկայացում)*

2020 թվականի հուլիսի 20-ին ԲՇԽ-ի կարծիքին է տրամադրվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Բնապահպանական ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը հաստատելու մասին» հրամանի նախագծի փաթեթը, որի վերաբերյալ ԲՇԽ-ի անդամները տրամադրել են իրենց նկատառումներն ու առաջարկությունները: Դրանք ազգային քարտուղարության կողմից ներկայացվել են լիազոր մարմին:

*Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում*

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ տեղի չի ունեցել, սակայն սեպտեմբերի 11-ին ԲՇԽ-ն էլեկտրոնային եղանակով հաստատել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցը:

*Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում*

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային խմբի հանդիպումներ չեն կայացել: ԲՇԽ-ի առանձին անդամներ քննարկումներ են ունեցել Անկախ ադմինիստատոր EY ընկերության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի վերաբերյալ ներկայացված նկատառումները:

*Միջոցառում 27. ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում*

Օգոստոսի 31-ից դադարեցվել է ԲՇԽ-ի կառավարության խմբակցության անդամ Սրբուհի Գալյանի լիազորությունը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնից ազատվելու և ՀՀ գլխավոր դատախազի` ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալ նշանակվելու հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի՝ կառավարության խմբակցության ՀՀ արդարատատության նախարարության անդամի նոր թակնածություն չի առաջադրվել:

*Միջոցառում 29. ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն*

ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային առցանց միջոցառումների և քննարկումների, մասնավորապես.

- 2020թ. հուլիսի 3-ին ազգային համակարգողների և ԱՃԹՆ-ի ներկայացուցիչների համար ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված «Վավերացման վերանայված մոդել» քննարկմանը,
- 2020թ. հուլիսի 30-ին OpenOwnership-ի տեխնոլոգիական թիմի կազմակերպած «Տեխնոլոգիական ցուցահանդես» առաջին միջոցառմանը[16],
- 2020թ. սեպտեմբերի 3-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպած «Կայուն պարտք, թե՞ սպասվող սպառնալիք: Ինչու է թափանցիկությունը կարևոր ռեսուրսներով ապահովված վարկերի համար»[17] քննարկմանը,
- 2020թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ ՏԿԵՆ տեղակալ Լիլիա Շուշանյանը մասնակցել է ԵԱՀԿ 28-րդ Տնտեսական և բնապահպանական ֆորումի եզրափակիչ առցանց հանդիպմանը[18], որի ժամանակ ներկայացրել է նաև ԱՃԹՆ-ի իրականացման արդյունքում երկրում հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողական բարձրացմանն ուղղված միջոցառումները,

---

[16] https://www.openownership.org/blogs/first-tech-showcase/

[17] https://eiti.org/event/sustainable-debt-pending-threat-why-transparency-matters-for-resourcebacked-loans

[18] http://www.mtad.am/hy/news/item/2020/09/11/mtad11.09/

- 2020թ. *սեպտեմբերի 14-ին կայացել է* Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի ներկայացման առցանց համաժողովը[19]:

*Միջոցառում 31. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում*

*Միջոցառում 32. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում*

Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի և Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագրի հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է 4-րդ եռամսյակի ընթացքում: Փաստաթղթերի հաստատումը հետաձգվել է COVID-19 համավարակով պայմանավորված ԲՇԽ-ի աշխատանքների պլանավորված ընթացքից շեղումներով:

*Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն*

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Համաշխարհային բանկի ներկայացուցչի հետ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման և Համաշխարհային բանկի հետ ԱՃԹՆ-ի առաջիկա համագործակցության շրջանակի նախանշման վերաբերյալ:

*Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք*

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ՀՀ ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով տվյալ ժամանակահատվածի համար սահմանված միջոցառումների պլանավորման և իրականացման աշխատանքները՝ համաձայնեցնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխահային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպություն: COVID-19-ի համաճարակի հետ կապված Հայաստանում արտակարգ դրության ռեժիմով պայմանավորված՝ շահագրգիռ կողմերի, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խմբերի անդամների հետ հանդիպումները կազմակերպվել են առցանց՝ ապահովելով ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներն ու համագործակցությունը, ինչպես նաև Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի շրջանակում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

*Միջոցառում 37. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետվության կազմում և հաստատում*

---

19 https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/09/14/2018-eiti-report-conference/98/

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից մշակվել է ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետության նախագիծը: ԲՇԽ-ի կողմից հաստատումը նախատեսվում է 4-րդ եռամսյակում:

*Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում*

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2020 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվությունը: Վերջինիս հաստատումը ԲՇԽ-ի կողմից նախատեսվում է 4-րդ եռամսյակում, որից հետո կհրապարակվի ԱՃԹՆ հայաստանյան կայքում:

*Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ*

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը համագործակցել է միջազգային քարտուղարության հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակում առկա հարցերի շուրջ: Մասնավորապես, քննարկվել են միջազգային քարտուղարության կողմից Հայաստանի 2018թ. ազգային զեկույցի վերաբերյալ միջազգային քարտուղարության տրամադրած նկատառումները, 2018թ. ամփոփ տվյալների ձևաչափի լրացման հետ կապված խնդիրները, Հայաստանի 2-րդ զեկույցի ներկայացման առցանց համաժողովին Միջազգային քարտուղարության ներկայացուցիչների մասնակցությունը և քարտուղարության կողմից ներկայացվելիք թեմաները: Ազգային քարտուղարությունը մասնակցել է նաև ազգային համակարգողների պլանային առցանց հանդիպումներին, որոնք հաշվետու ժամանակահատվածում հիմնականում նվիրված են եղել ԱՃԹՆ-ի անդամ երկրների վերանայված վավերացման մոդելի քննարկումներին:

| ՆՊԱՏԱԿԸ | ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ զեկույցի կազմում | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 43.1 **ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ Հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր, ԲՇԽ-ի նիստ<br><br>*Վերջնաժամկետը*՝ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, այլ շահագրգիռ մարմիններ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանություների պատճառների վերացման նպատակով** | Ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 46. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2018**թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Տեխնիկական առաջադրանք<br><br>*Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ, 2019թ. - երրորդ եռամսյակ, 2020թ. | Իրականացվել է | Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 43.1. ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով*

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունն սկսել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին և երկրորդ զեկույցներում ներկայացված բացերի հիման վրա հանքարդյունաբերության ոլորտի կարգավորումների թերությունների արձանագրման և դրանց շտկման ճանապարհային քարտեզի նախագծման աշխատանքները: Ճանապարհային քարտեզի նախագիծը ԲՇԽ-ի քննարկմանը կներկայացվի 4-րդ եռամսյակի ընթացքում: Նաև տե՛ս Միջոցառում 24.2:

*Միջոցառում 46. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. հաշվետու տարվա զեկույցի մշակում*

Անկախ ադմինիստատոր «Էրնսթ ընդ Յանգ» (EY) ՓԲԸ-ն ներկայացրել է զեկույցի վերջնական նախագիծը, որը քննարկվել է ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից և հաստատվել է ԲՇԽ-ի կողմից էլեկտրոնային եղանակով սեպտեմբերի 11-ին: Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. ազգային զեկույցը հանրությանն է ներկայացվել սեպտեմբերի 14-ին կայացած առցանց համաժողովին: Հայերեն և անգլերեն[20] զեկույցը և զեկույցի սեղմագիրը

[20] https://www.eiti.am/en/annual-reports/2020/

հասանելի են Հայաստանի ԱճԹՆ-ի պաշտոնական կայքում[21]: Հայաստանի ԱճԹՆ-ի 2018թ. զեկույցը հրապարակվել է նաև ԱճԹՆ-ի միջազգային քարտուղարության կայքում[22]: Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի 2018 թվականի թվային տվյալները և ընդերքօգտագործող ընկերությունների և պետական մարմինների կողմից ներկայացված հրապարակային հաշվետվությունները հասանելի են reports.eiti.am առցանց հաշվետվությունների հարթակում:

*Միջոցառում 47. ԱճԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում*

Հաշվետու ժամանակահատվածում ընթացել է ԱճԹՆ-ի 3-րդ՝ 2019 հաշվետու տարվա ազգային զեկույցի և հաջորդ տարվա զեկույցի նախնական ուսումնասիրության կազմման խորհրդատվական ծառայությունների գնումների գործընթացը:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդնում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 54. **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Ճանապարհային քարտեզի միջոցառումներ<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Չի իրականացվել | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱճԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան նախարարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 55. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[21] https://www.eiti.am/hy/annual-reports/2020
[22] https://eiti.org/armenia

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ** | *Արդյունքները՝* հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 54. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում*

Միջոցառումը չի իրականացվել հաշվետու ժամանակահատվածում:

*Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ*

2020թ հուլիսի 16-ին ՀՀ ԱԺ-ն ընդունել է օրենքների փաթեթ: Ի թիվս մի շարք ոլորտային կարգավորումների՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի[23] համաձայն 2021 թվականից պարտադիր կդառնան նաև ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագրերի պայմանագրերի հրապարակումը և դրանց հանրային հասանելիությունը:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգված բացահայտման խրախուսում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 58. | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[23] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145085

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչներին հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը օգտագործելու վերաբերյալ խորհրդատվության ներկայացում** | *Արդյունքները՝* Խորհրդատվություն<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ- երրորդ եռամսյակ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, անկախ աուդիտոր | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |

*Միջոցառում 58. Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչներին հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակը օգտագործելու վերաբերյալ խորհրդատվության ներկայացում*

Հաշվետու ժամանակահատվածում՝ մինչև օգոստոսի 1-ը հրապարակային հաշվետվություններ ներկայացնելու պարտականություն ունեցող բոլոր ընդերքօգտագործողների ու պետական մարմինների կողմից ներկայացվել են 2019 հաշվետու տարվա հրապարակային առցանց հաշվետվությունները: Հայաստանի ազգային քարտուղարությունը հաշվետվություն ներկայացնողներին, ըստ անհրաժեշտության, տրամադրել է խորհրդատվություն հաշվետվությունների արցանց հարթակի գործածման և հաշվետվությունների առցանց ձևի լրացման վերաբերյալ:

*Հավելված 1*

**2020 թվականի երրորդ եռամսյակում «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները**[24]

*Տեղեկատվությունը տրամադրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից*

*1. Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում*

1. 1 Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված նոր դրամաշնորհային ծրագրի շրջանակում (01.05.2020-30.04.2021), հաշվետու ժամանակահատվածում մշակել է հանքարդյունաբերության մոնիտորինգի (ներառյալ՝ բնապահպանական և սոցիալական մոնիտորինգ) ձեռնարկի նախնական տարբերակը, որի նպատակն է ուսուցանել և ներգրավվել երիտասարդներին հանքարդյունաբերության վերահսկման գործընթացներում: Նախատեսվում է ավարտել ձեռնարկը հաջորդ հաշվետու ժամանակահատվածում՝ թարգմանելով այն հայերեն:

1. 2 «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված նոր դրամաշնորհային ծրագրի շրջանակում (01.05.2020-30.04.2021), հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրել է ծրագրով նախատեսված 21 մետաղական ընդերքօգտագործողներից 8 ընկերությունների՝ պայմանագրերով ամրագրված պարտավորությունները և դրանց չկատարման հնարավոր պատճառները և պատասխանատվությունը: Կազմվել է դրանցից 3-ի՝ «Սագամար» ՓԲԸ, «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊԸ, «Բակտեկ էկո» ՍՊԸ գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, որոնք հրապարակվել են www.ecolur.org կայքում, իսկ «Սագամար» և «Մուլտի գրուպ կոնցեռն» ընկերությունների վերաբերյալ հաշվետվություններն ուղարկվել են ԱՃԹՆ ԲՇԽ-ին: Մնացյալ 5 ընկերությունների վերաբերյալ հաշվետվությունները նախատեսվում է ամփոփել հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

1. 3 2020 թվականի հուլիսի 2-ին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակում

[24] Տեղեկատվությունը տրամադրվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից

հրապարակել է հանքարդյունաբերության ոլորտում հետաքննական լրագրողական նյութեր պատրաստելու հրավեր: Լրագրողների կողմից ներկայացված 15 հայտերից գնահատման հանձնաժողովի կողմից ընտրվել է 6 դիմումատու, որոնք 25.09.2020թ. - 31.01.20201թ. պայմանագրերի շրջանակներում կմշակեն հանքարդյունաբերությանն առնչվող մի շարք թեմաներով հետաքննական նյութեր՝ ըստ սահմանված ֆորմատի:

1. 4 «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի կողմից ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակում շարունակել է հանքարդյունաբերության ոլորտին նվիրված հետաքննական հոդվածների շարքը: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կողմից մշակվել և հրապարակվել է 1 հետաքննական հոդված, 3 տեսապատում ( photo stories) և 12 հոդված, որոնք նպատակ ունեն խթանելու հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը և իրական սեփականատերերի բացահայտումը:

## *2. Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում*

2.1 «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված նոր դրամաշնորհային ծրագրի շրջանակում (01.05.2020-30.04.2021), հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իրազեկման 12 հանդիպում Լոռու, Սյունիքի և Կոտայքի մարզերի մի շարք ազդակիր համայնքներում: Մասնավորապես՝ տասներկու համայնքներում տեղի ունեցած հանդիպումներին մասնակցել է 61 շահառու՝ տեղացի բնակիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ և այլն, որոնք տեղեկացել են իրենց համայնքերում գործող հանքարդյունաբերական ընկերությունների, նրանց կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների, ինչպես նաև ԱՃԹՆ ստանդարտի, ընթացակարգերի և օրենսդրական դաշտի վերաբերյալ: Ի լրումն՝ նախապես մշակված հարցաթերթիկների հիման վրա անցկացվել են հարցազրույցներ ՏԻՄ-երում և բնակչության, քաղաքացիական հասարակության շրջանում պարզելու ընդերքօգտագործողների գործունեության հետևանքները տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական, բնապահպանական վիճակի վրա, ինչպես նաև դրանցում ներառված համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ: Այցերի ժամանակ համայնքապետարաններին տրամադրվել է նաև «ԱՃԹՆ-ի ստանդարտ 2019 թվական» հրապարակումը:

*Հավելված 2*

**2020թ. հոկտեմբերի 19-ի դրությամբ իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող ընկերություններին ներկայացված զգուշացումների և զգուշացումների հիմքերի մասին տեղեկատվություն**

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը | Հատարարագրերի և պահանջվող փաստաթղթերի հետ կապված առկա թերությունները | ընդերքօգտագործողին գրավոր զգուշացում տալու հիմքը |
|---|---|---|---|
| Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող ընկերություններ | | | |
| 1. | «ԼԵՌ ԷՔՍ» ՍՊԸ | Սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացված չեն | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 2. | «ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ | Սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացված չեն | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 3. | «ՎԱՅՔԳՈԼԴ» ՍՊԸ | Սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացված չեն | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 4. | «ՄԱՐՋԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ | Սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացված չեն | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 5. | «ՄԵԳՈ-ԳՈԼԴ» ՍՊԸ | Սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացված չեն | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 6. | «ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ» ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ | Սույն թվականի հունիսի 26-ին գրանցվել է գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն, սակայն փոփոխությունից հետո՝ 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պետական ռեգիստր չի ներկայացրել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | «ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ | 28.07.2020թ. գրանցվել է իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագիր, որի հիմնավորող փաստաթղթերը դեռևս չեն ներկայացվել | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 8. | «ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ | Բացակայում են հիմնավորող փաստաթղթերը, առկա են լրացման ենթակա, սակայն չլրացված տեղեկություններ, բացի այդ, սույն թվականի հունիսի 9-ին գրանցվել է գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն, սակայն փոփոխությունից հետո՝ 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պետական ռեգիստր չի ներկայացրել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 9. | «ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՍՊԸ | Բացակայում է գործադիր մարմնի ղեկավարի՝ որպես իրական սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկատվությունը | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| 10. | «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ | Սույն թվականի օգոստոսի 21-ին գրանցվել է գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն, որպիսի պարագայում փոփոխությունից հետո՝ 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է պետական ռեգիստր ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |
| Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերություններ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | «ԳԵՈՌԵՅԴ» ՓԲԸ | Բացակայում են սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը | ներկայացված տվյալները ոչ ամբողջական |